

Ա. Խ. Հ.

Պրոլետարիատ բոլոր յեղափոխի, միացե՛ք

25-642

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ձ. ՅԵԶԵՆԲԱՐՆ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԵՍ ԴԱԱ-
ԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՅՈՒՆԵՐ

Թուղթ. Մ. Ա.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵԿԵՎ ա 6-1923

Հ. Ա. Խ. Հ.

Գրականութեա բայու յետկրմեա, միացեա

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Զ. ՏԵՏԵՆԲՈՅՆ

ԲՈՒՎՈՐԴԵՐԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈ ՐԹԵՍ ԴԱՍ-
ԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ

Թարգմ. Մ. Ա.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ-1928



Պատկեր № 652

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐԹԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐ- ԴՅՈՒՆՔ

Կապիտալիստական կարգերում աշխատավոր հոծ բազմությունների կացությունը բնորոշող գլխավոր փաստն այն է, վոր նրանք աշխատավարձից զատ ապրուստի և վոչ մի ուրիշ աղբյուր չունին։ Աշխատավարձն ել այնքան քիչ է, վոր հազիվ թե կարողանան հոգալ իրենց կենսական նվազագույն կարիքները, ինչպես ասում են, հազիվ կարողանան ծայրը ծայրին հասցնել։ իսկ յեթե պատահեց վոր, հանկարծ, աշխատավարձ ել չունեցան, այն ժամանակ, արդեն, նրանք կանգնած պիտի լինեն կորըստյան դռան առաջ։

Աշխատավարձից զրկվելու դեպքում վարձու բանվորի կյանքը փրկելու, նրա գոյությունը պահպանելու խնդիրը դառնում է մի անհրաժեշտություն և հենց այդ անհրաժեշտությունից ել բղխում եապրուստի միջոցներից զրկված աշխատավորների հասարակական ապահովության պահանջը։ Այսպես եառաջ յեկել վարձու բանվորների հասարակական ապահովության խնդիրը։

Հասկանալի յե, վոր վարձու աշխատանք կատարողների հասարական ապահովության գաղափարը կարող եր ծագել միայն կապիտալիստական կարգերում։ Յեվ իրոք, յեթե ֆեոդալական - կալվածատիրական կարգերին չհաջորդեր բուրժվական - կապիտալիստական հասարակարգը, յեթե յերեան չգար խոշոր արդյունաբերությունն ու նրա հետ միասին՝ աշխատավարձով իրենց գոյությունը պահ-

պանող բանվորների հսկա բանակը, աշխատավարձից դրկը-
վածների ապահովության խնդիրն ել հրապարակ չեր գա:

Այլ ե դրությունը կապիտալիստական կարգերում։
Մարդկանց գոյության անհրաժեշտ պայմանը այստեղ սե-
փականության անհատատիրական սկզբունքն ե, իսկ վար-
ձու աշխատանք կատարող բանվորների մեծամասնությունը
իր բանվորական ուժից զատ ուրիշ սեփականություն
չունի։ Անաշխատունակության կամ գործազրկության
դեպքում պարզ ե, վոր բանվորական ուժը իրը ապրուս-
տի միջոց, պիտի կորցնե իր նշանակությունը։ ահա, հենց
դրա հետեւանքով առաջ ե գալիս մի անհրաժեշտ խնդիր,
այն ե՝ վորեւ կերպ ապահովել անաշխատունակներին,
գործազրկներին, վորոնք զրկվել են իրենց գոյությունը
պահպանելու միջոցներից։

Հասարակական ապահովության գաղափարը, ճիշտ ե,
բուրժվական տիրապետության պայմանների արդյունք ե,
սակայն նրա նախաձեռնությունը պատկանում ե բանվոր
դասակարգին, պրոլետարիատին։

Ինչու հասարակական ապահովության գաղափարն
ստեղծողը վոչ թե կապիտալիստական կարգերում իշխող
բուրժվական դասակարգն ե, այլ հատկապես պրոլետար-
իատը։ Այս հարցին բացորոշ պատասխան ե տալիս հենց
ինքը՝ կապիտալիստական աշխարհի իրական կացությունը,
նրա տնտեսական ու սոցիալական կառուցվածքը։ Հասա-
րակական ասլահովության գաղափարը կապիտալիստական
հասարակության տնտեսական կառուցվածքին, բուրժվա-
գիայի դասակարգային շահերին, հետեւապես և բուրժվա-
կան դասակարգի գաղափարախոսությանը հակադիր մի
յերեւյթ ե։ այս կամ այն պատճառով աշխատավարձից
զրկված բանվորների ապահովության վոր ճյուղն ել վեր-
ցնելու լինենք, կտեսնենք վոր նա դիպչում ե բուրժվա-
գիայի շահերին, հակասում ե նրա հետապնդած նպատակ-
ներին և նրա դասակարգային պահանջներին։

Ժամանակավորապես անաշխատունակ դարձած, հիվանդ բանվորին ապահովելը յերբեք ձեռնտու չե կապի-
ալիստին. չե վոր հիվանդ աշխատավորը ձեռնարկու-
թյանը վոչ մի ոգուտ չի բերում: Ճիշտ ե, հիվանդու-
թյան դեպքում բանվորին ոգնություն ցույց տալով կա-
պիտալիստը իր իսկ ձեռնարկության բանվորական ուժը
պահպանած կլինի, բայց մեծ մասամբ այդ ել նրան չի
հետաքրքրում, վորովինետև աշխատանքի ազատ շուկայում
նա միշտ կարող ե միննույն մասնագիտության ու վորակի
տեր բանվորներ վարձել:

Պատկերը նույնն ե նաև մայրությունը ապահովելու
խնդրում: Ծննդաբերությունը բանվորուհու համար խոշոր
ծախսերի դուռ ե բաց տնում. իր այդ ծանր կարիքները
բավարարելու հոգսի տակ ընկճված՝ բանվորուհին ստիպ-
ված ե լինում դժվար ու յերկարած աշխատանքներ կա-
տարել, վորպեսզի կարողանա իր աշխատավարձը մի քիչ
շատացնել: Հենց այդ ել բավական ե, վոր նրա աշխա-
տանքը ամեն կերպ շահագործման յենթարկվի: Ազատել
աշխատանքից և ապահովել մայր դարձած բանվորուհուն՝
կնշանակի զրկել կապիտալիստին նրան շահագործելու
հսարափությունից ճիշտ այն ժամանակ, յերբ բանվո-
րուհին շատ հեշտությամբ պիտի յենթարկվեր շահագործ-
ման: Ահա թե ինչու բուրժվական հասարակության մեջ
մայրության ապահովագրության որենսդրությունը այն-
քան ել լավ ընդունելություն չի գտնում:

Առանձնապես բուրժվագիայի շահերին դեմ ե գնում
գործազուրկների ապահովագրությունը: Կապիտալիստա-
կան դասակարգը ուղղակի շահագրգոված ե, վոր գործա-
զրկությունը միշտ գոյություն ունենա: Գործազրկու-
թյան ժամանակ բանվորները պատրաստ են հանձն առ-
նելու ամենածանր աշխատանքները, գործազրկության
վախը նրանց դարձնում ե ավելի հեղ, ավելի խոնարի,

նրանք հանդուրժում են ամեն ակտով սնաբդարություն և արհամարանք, յերբ ակտում են, վոր իրենց նման բազմաթիվ անգործներ կապիտալիստի զուռն են ծեծում զործ ստանալու համար։ Ինարկե վոր զործազուրկների ապահովումը մի լուրջ հարված պիտի հասցներ բուրժվական - կապիտալիստական սխառեմին։ Այդ շատ լավ են հասկանում ձեւնարկատերերը և հենց զրանով պիտի բացարել, վոր բուրժվական պետությունը իր զոյության ամենաճշնաժամացին բողեցին իսկ չի հաշտվում զործազուրկներին ապահովագրելու մոքի հետ։

Եերված որինակները մեզ ցույց են տալիս, վոր սոցիալական ապահովագրությունը միանգամայն հակասում է բուրժվական կապիտալիստական զասակարգի շահերին։ Ահա այդ պատճառով ել բուրժվական կարգերում սոցիալական ապահովագրությունը շատ ուշ ե յերեան զալիս և շատ դանդաղ, համարյա թե կրիալի քայլերով և սուած զնում *):

II

Իր զոյության առաջին իսկ որերին բուրժվական հաստրակության առաջ դրված և յեղել մի խնդիր, այն են պայքարել պրոլետարիատի շարքերում ծավալվող շքավորության և զործազրկության դեմ։

Ազգաբնակության հած բազմությունների ազգաստոցումը, այնուամենայնիվ, մի սպառնալիք ե՞ ուղղված կապիտալիստական սխառեմի գեմ, մի սպառնալիք ե, վոր վտանգի յե յենթարկում բուրժվական պետության բարեկարգ ու բարեկեցիկ վիճակը։ Պոռնկություն, մուրացկանություն, վարակիչ հիվանդություններ, հանցազործություն, և այլն, այս ամենը մասսաների աղքատացման

*) Պետական ապահովագրության առաջին որենքը հրատարակվել և Գերմանիայում (պետական ապահովագրության հայրենիքում) միայն 1883 թվին։

հետ սերտ առընչություն ունեն։ Բուրժվական հասարակությունը և պետությունը, կամա թե ակամա, հենց թեկուզ ինքնազաշտպանության նպատակով, սախալված են միջոցներ ձեռք առնել չքավորության և զործազրկության այդ վասնզավոր հետեանքների դեմ։

Չքավորության հարցի լուծումը բուրժվական հասարակության համար մի անհրաժեշտություն է։

Տեսնենք, ապա, թե բուրժվական պետությունը ինչ մեթոդներով և ուղում լուծել իրեն զրազեցնող այդ կարիոր խնդիրը։

Բուրժվական կարգերում չքավորության և զործազրկության դեմ կովելու հիմնական ձեր՝ դա ինսամատարության և վերջնիս զուգակցող՝ պատճի սիստեմն է։

Չքավորությունը հենց իրենց՝ չքավորների մեղքերի արգյունք և համարվում, այդ պատճառով ել, նյութական սժանզակություն մատուցանելով հանդերձ, նրանց վերաբերմամբ զործազրում են նաև պատճիչ միջոցներ։

Անգլիայում, որինակ, չքավորների ողտին հարկ եր սահմանված, բայց նույն չքավորները ոլարտուվոր եյին վորոշ պարագիր աշխատանքներ կատարել, իսկ զործազրուրկը իր բնակության վայրից, իր ծխից հեռանալու իրավունք չուներ։ Հիշած սահմանափակումներին յենթարկում եյին վոչ միայն իսկական զործազրուրկները, այլ նաև նրանք, ովքեր ծխական իշխանությունների կարծիքով զործազրուրկ դառնալու նշաններ եյին ցույց տալիս։

Իսկ այդ ժամանակներում զործազրուրկների թիվը շատ մեծ եր. լորդը քշում եր իր հողից նախկին ճորտերին, իսկ մանուֆակտուրան քանզում եր համբարական արգյունաբերության հիմքերը^{*)}։ Նույն բանը մենք տեսնում ենք նաև Պրուսիայում, ուր 1794 թ. զեմսավային որենքները չքավորների հասարակական իննամատարու-

^{*)} Միլ. Ռլյոնով — «Պետությունը և բանվորների ապահովագրությունը» 1906 թ. եջ 5։

թյուն սահմանելով հանդերձ, մացնում են հսկողության յենթակա պարտադիր աշխատանքների սիստեմը։

Զքավորների խնամատարության այդ պատժիչ ընույթը բուրժվական պետությունների մեջ տիրապետող ե մնում մինչև վերջերս։

Մուս հետադիմական պրոֆեսորներից մեկի *) պատմելով «ազատ» Անգլիայի աշխատանքի տների ռեժիմը այնքան խիստ ե, վոր «ծերունիները կգերադասեն ավելի շուտ գյուղերում սովամահ լինել, քան աշխատանքի տուն գնալ»։ Իսկ մի ուրիշը, չքավորների խնամատարության հարցն ուսումնասիրող մի անձնավորություն, պատմում ե, վոր անգլիական աշխատանքի տների ռեժիմը բանտային ռեժիմից ավելի ծանր ե **)։

«Խնամատարության» գործը ճիշտ նույն ընույթն ունի բուրժվական մյուս յերկրներում ևս։ Բուրժվական հաստրակությունը չքավորին նայում ե իբր մի հանցագործի, առանց հաշվի առնելու թե ինչ պատճառներով ե նա այդ վիճակին հասել։ Ճիշտ ե, յերբեմն բուրժվական

*) Զալեսսկիյ — «Չքավորների խնամատարության սիստեմները» 1912 թ. եջ 46։

**) «Հյուսիսային և միջին Անգլիայի խոշոր քաղաքային կենտրոններում գուք կհանդիպեք վիթխարի ու մենավոր շենքերի, ուր տեղավորում են պատահական աղքատներին։ Այդ շենքերի սենյակները մութն են ու խոնավ, բաց քարե հատակը անկողնու տեղ ե ծառայում և միայն մի վերմակով են ծածկվում այնտեղ քնողները։ Ցերեկը աղքատներին փակում են առանձնակի կացարաններում, ուր նրանք իննը ժամ շարունակ պարտավոր են քար կոտրել — մի ձանձրալի, ծանր աշխատանք... յերեվակայելն անգամ դժվար ե։ Աղքատը, վորին վիճակվել ե ընկնել այդտեղ, և եծ ուրախությամբ բանտ կգնա, վորովհետեւ բանտային ռեժիմը, այնուամենայնիվ, այդքան խիստ չե»։ — Գագեն — «Արևմտյան Յեվրոպայի չքավորը» եջ 136—137, Վարշավա, 1912 թ.։ Նույն տեղ, եջ 122—123 նկարագրվում ե աշխատանքի տան ռեժիմը՝ պարզաբանված պաշտոնական տվյալներով։

Պետությունները միջոցներ են ձեռք առնելմ վորպեսզի չքավորները սովածան չլինեն, սակայն, ամեն պարագայում ել նրանք համարվում են հասարակության իրավագուրկ անդամ։

Բոլոր յերկրներում ել հասարակական խնամատարությունից ոգտվելու հետևանքը լինում ե իրավազրկություն, կամ ամենալավ դեպքում իրավունքների կրծատումն։ Իբրև ընդհանուր կանոն, հասարակական խնամքից ոգտվողը զրկվում ե ընտրական իրավունքից։ Գերժանիայում գործող՝ չքավորների խնամատարության այսպես կոչված ելքերֆելդյան սիստեմով խնամվողը կորցնում է իր բոլոր հասարակական իրավունքները, պարտավոր ե իր արարքների մասին հաշիվ տալ իրեն խնամողներին, հասարակական զվարճատեղիներ այցելելու, ընտանի կենդանիներ պահելու իրավունք չունի, ևայլն։ Իսկ յեթե սահմանված կարգը խանգարեց, նա վարչական կարգով պաժժի կենթարկվի։

Ահա թե վորոնք են բուրժվական խնամատարության բնորոշ կողմերը։ Զմոռանանք հիշել, վոր բուրժվական յերկրներում (Ֆրանսիա, Հոլանդիա, Բելգիա) շատ տարածված են նաև պատահական ոգնության ձևերը, ինչպես են՝ վողորմություն տալը, բարեգործություն անելը։ Ճեմեր, վորոնք միայն այլասեռում և ստորացնում են կարիքավորներին։

III

Խնամքի ունրան զուգակցող պատժի սիստեմը, վոր հատուկ ե բուրժվական հասարակության և համապատասխանում ե նրա հայեցակետներին, բուրժվական պետությունների մեջ աստիճանաբար փոխարինվում ե սոցիալական ապահովագրության սիստեմով։ Բուրժվական դասակարգը, ինչպես վերևում ասվեց, չի կարող սոցիալական ապահովագրության սիստեմի ստեղծողը լինել, վո-

բովիետև սոցիալական ապահովագրությունն ու կապիտալիստական հասարակության տնտեսակարգը, բուրժվազիայի դասակարգային շահերը, դասակարգային աշխարհայեցողությունը միմիանց հետ հաշտվել չեն կարող: Այդ սիստեմի նախաձեռնությունը պըոլետարիատին ե պատկանում:

Սոցիալական ապահովագրության սիստեմը սկիզբն ե առնում փոխադարձ ոգնության բանվորական կազմակերպություններից. վերջիններս, ինչպես որինակ «բարեկամական ընկերություններն» Անգլիայում և Ֆրանսիայում, իրենց գոյության սկզբնական շրջանում բացառապես փոխադարձ ոգնության նպատակների ելին հետապնդում. սակայն, շատ շուտով, մասնակի այդ խնդիրը դառնում ե մի մասն այն ընդհանուր պայքարի, վոր մղվում եր գործատիրոջ դեմ՝ աշխատանքի պայմանները բարելավելու նպատակով: Մատնանշենք հենց, թեկուզ, անգլիական բանվորական միությունների—տըեղ-յունիոնների փորձը. նրանք փոխադարձ ոգնության գործն ու գործադուլային պայքարը միշտ առաջ են տարել անբաժան կերպով:¹⁾)

Փոխադարձ ոգնության բանվորական կազմակերպությունները յերեան են գալիս թե չե, բուրժվական պետություններն սկսում են պայքար մղել նրանց դեմ:

1800 թվին Անգլիայում հրատարակվում ե մի որենք, վորով արգելվում եր ընկերությունների կամ միությունների գոյությունը:

1791 թ. Ֆրանսիայում լույս ե տեսնում մի որենք՝ ուղղված միությունների և գանձարկղների կազմակերպման դեմ: Այս որենքը 1803 թ. մուծվում ե քրեական որենսգրքի մեջ և լիակատար չափով գործադրվում մինչև 1808 թիվը:

Փոխադարձ ոգնության բանվորական կազմակերպու-

¹⁾) Ն. Ա. Վիդդորչիկ—«Սոցիալական ապահովագրությունը» Պետրոգրադ, 1921 թ. եջ 19—28:

թյունների դեմ ուղղակի պայքար մղելու հետ միաժամանակ, բուրժվական պետությունները յերևան են բերում մի այլ ձգտումն՝ ոգտագործել այդ կազմակերպությունները կառավարական նպատակներով, կամ այլ կերպ ասած, այնպես անել, վոր նրանք չկարողանան վորեւ վաս հասցնել պետությանը։

Այդ ձգտումը—բանվորական կազմակերպություններն ոգտագործել հենց բանվորներին վասելու նպատակով—իհարկե, բուրժվական պետությունների բանվորական կազմակերպությանց դեմ մղած դասակարգային պայքարի ձևերից մեկն ե։ Նման ոգտագործման որինակներ մենք գտնում ենք բոլոր յերկրներում և բոլոր ժամանակներում։

1788 թ. Անգլիայում շկիպերները (նավային պաշտոնյաններ) իրենց համար փոխադարձ ոգնության գանձարկղ հիմնելու թույլտվություն են խնդրում. ի պատասխան դրա՝ լույս ե տեսնում մի որենք, վորով գանձարկղի վարչության անդամների $\frac{2}{3}$ մասը պիտի նշանակվեր կառավարության կողմից։ Այս որենքը գործադրվում ե մինչև 1793 թիվը^{*})։

Հետաքրքիր ե, թե նույն խնդրի վերաբերմամբ ինչ քաղաքականություն ե վարում նապոլեոն III-ը Ֆրանսիայում։ Նա հայտարարում ե, թե պատրաստ ե 10 միլիոն ֆրանկ նվիրաբերել այն ընկերություններին, վորոնք կ'կազմակերպվեն հետևյալ հիմունքների համաձայն. — 1. «Հավանության արժանացած» ընկերության նախագահը նշանակվելու յե կառավարության կողմից, 2. պատվավոր անդամներ ընտրելու ձեր պահպանվելու յե և 3., վորն առանձնապես նշանակալից ե, գանձարկղի միջոցներից և վոչ մի ձեռվ գործազուրկը դրամական նպաստ չի ստանալու։ Տրված հրահանգներով պրեֆեկտների վրա

^{*}) Միխ. Ռլյոնով—նույն գիրքը, եջ 7, ծանոթությունը.

պարտականություն ե դովում տարածելու «հռվանության արժանացած» ընկերությունների գաղափարը գործարանատերերի, աստիճանավորների և հոգևորականների շրջաններում՝ աշխատելով վոր վերջիններս պատվավոր անդամներ ընտրվին*):

Բայց, բանը նրանումն ե, վոր փոխադարձ ոգնության բանվորական կազմակերպությունների դեմ սկսած պայքարի բոլոր յեղանակներն ել բուրժվազիայի համար ցանկալի արդյունքներ չեն տալիս։ Բանվոր դասակարգի ուժեղացումով ուժեղանում ե նաև դասակարգային պայքարը։ Վերջինիս արտահայտություններից մեկն ե սոցիալական ապահովագրության համար մղված կռիվը, վոր առաջ ե տարվում հավասար թափով։ 1848 թ. Փարիզի հեղափոխական պրոլետարիատն աշխատանքի իրավունքների պահանջն ե հրապարակ բերում։ Նույն թվին Բերլինի բանվորները հավաքվելով քաղաքային դռների առաջ, իրենց աշխատանքով ապահովելու պահանջն են դնում։ Այդ դեպքերից քիչ հետո, Բերլինում կազմակերպված բանվորական կենտրոնական կոմիտեն 1848 թ. ոգոստոսի 25-ի բանվորական ժողովի որակարգի մեջ դնում ե բանվորներին պետության միջոցներով ապահովելու և բոլոր անողնական ու հաշմանդամ բանվորների խնամատարության գործը կազմակերպելու հարցը**):

Բանվորական շարժման զարգացումն ու թափը ստիպում են բուրժվական պետություններին զիջումի ճանապարհը բռնել։ Հիվանդության, ծերության, հաշմանդամության դեպքերում բանվորների ապահովության վերաբերող բոլոր որենքները թեպետ ձևականորեն բուրժվական որենսդրությունից են բղխում, սակայն փաստորեն նրանք պրոլետարիատի նվաճումներն են՝ ձեռք բերված

*) Միիւ. Ոլյոնով—նույն գիրքը։

**) Յ. Մերինգ—«Գերմանիայի պատմությունը միջին դարի վերջերից սկսած» 1920 թ. էջ 145, 152—153

կապիտալիստական դաստկարգի դեմ մղած պայքարի ընթացքում։ Այս քանը հաստատելու համար մենք կարող ենք բազմաթիվ որինակներ բերել բանվորների ապահովագրության վերաբերող որենսդրության պատմությունից։

Պետական ապահովագրությունը հիվանդ բանվորների վրա տարածելու առաջին որենքը լույս ե տեսնում Գերմանիայում, իբր արդյունք սոցիալ-դեմոկրատական շարժման ուժեղացման։ 1871 թ. Բիսմարկն այն կարծիքն ե հայտնել, թե սոցիալական շարժումը կասեցնելու միայն մեկ միջոց կա—իրականացնել սոցիալիստների այն պահանջները, վորոնք արդարացի յեն և վորոնց իրականացումը հնարավոր ե ներկայիս պետական հասարակական կարգերի սահմանում։ Բանվորական շարժման թափն արգիլելու համար մի շարք բռնի միջոցներ գործադրելով հանդերձ (1878 թ. բացառիկ որենքն ընդդեմ սոցիալիստների) կանցլերը 1880 թ. դաշնակցային խորհրդի քննությանն ե դնում մի որինագիծ՝ դժբաղդ դեպքերի ժամանակ բանվորներին ապահովագրելու մասին. ի պաշտպանություն իր որինագծի, նա բերում ե, ի միջի այլոց, նաև հետևյալ պատճառաբանությունը. «Պետությունը պետք ե հոգա իր կարիքավորների մասին.... յեթե մենք կարողանանք ազգաբնակչության չքավոր դասերին ներշրնչել այն միտքը թե պետությունը այդպիսիների վերաբերմամբ բարեհաճ տրամադրություններ ունի, ապա դրանով նպաստած կլինենք պետական կարգի պահպանության գործին»։ 1882 թ. հունիսի 12-ին ռայխստագում արտասանած ճառի մեջ Բիսմարկը բանվորների ապահովագրության վերաբերող իր նախագծերը հետևյալ կերպ ե բնորոշում. «սոցիալական ախտերը բուժելու համար առաջարկված այս դեղատոմսերը յերկու կաթիլ յուղից ավելի վոշինչ չեն տա»։

Ռուսական սոցիալ-ապահովագրական որենսդրությունն

Ել հանդես ե գալիս վորպես պըոլետարիատի դասակարգային պայքարի արդյունք։

Ինչպես արևմուտքում, այնպես և Ռուսաստանում, ոռուս պըոլետարիատի սոցիալական ապահովագրության ասպարիզում ձեռք բերած նվաճումները սերտ առընչություն ունեն գործադուլային շարժման հաջողության հետ։ Ռուս ականավոր ապահովագրական գործիչներից մեկը—Բ. Գ. Դանսկին—ցույց ե տալիս*), վոր բանվորների ապահովագրական պահանջները շոշափելի արդյունք են տվել առանձնապես 1905—1906 թ., յերբ գործադուլային շարշումն իր լարման գագաթնակետին եր հասել։ 1905—1906 թվականներին Ռուսաստանի զանազան վայրերում գործատերերի ու բանվորների միջև հավաքական պայմանագրեր են կնքվում, վորոնց ուժով հիվանդ բանվորն ապահովություն ստանալու իրավունք ե ձեռք բերում։

1904 թ. դեկտեմբերին, այսինքն առաջին անգամ Բագվի շրջանում նման մի համաձայնություն ե կնքվում, վորով սահմանվում ե թե ինչ դրամական նպաստներ պիտի ստանան Սև և Սպիտակ քաղաքների արդյունաբերական ձեռնարկներում—նավթահանքերում, քիմիական գործարաններում, մեքենայական արհեստանոցներում, ելեկտրոկայաններում աշխատող բանվորները։ 1905 թ. վետրվարին պայմանագրի ուժը տարածվում ե տպարանների, վիմագրատների և կազմատների բանվորների, իսկ 1906 թ. հունիսին նաև ապրեսնիտելի (գործիք, վորով քաղցրացնում են ծովի ջուրը), գարեջրի գործարանների և նավաշինարարական արհեստանոցների ու գործարանների բանվորների վրա։ 1904 թ. հուլիսին նման համաձայնություն ե կնքվում Գրողնիյի նավթահանքերի տեղերի և բանվորների միջև։ Հիվանդության ժամանակ դրա-

*) «Բանվորների ապահովագրությունը Ռուսաստանում և Արևմուտքում» հատոր Ա., պրակ Ա, եջ 10—11, 1913 թ.

մական նպաստ տալու մասին հավաքական պայմանագիր
և կնքվում Սամարայում 1905 թ., իսկ Արխանգելսկում
և Որենբուրգում 1906 թ.:

1905—1906 թվականներին առանձին ձեռնարկատե-
րերի զիջումներն ու առանձին ձեռնարկություններում
աշխատող բանվորների հետ պայմանագրեր կնքելու մա-
սին, եղած համաձայնություններն այնքան ել բացորոշ
կերպով չեյին տեղի ունենում:

Հիվանդ բանվորների ապահովության նախադին
կցված մինիստրական բացատրությունը, վոր ներկայաց-
վեց յերրորդ Դումային 1906 թ., մեջ ե բերում այդ-
պիսի համաձայնության դեպքեր Վլադիմիրյան նահան-
գում—54 հատ, Սամարայի նահանգում—29, Խերսոնի
նահանգում—45. այնինչ իրականում կնքված համաձայ-
նությունների թիվը մի քանի անգամ ավելի յեր:

1905—1906 թվականներին ոռւսական գործարանա-
յին բանվորության մոտավորապես յերրորդ մասն արդեն
ձեռք եր բերել հիվանդության դեպքում ձեռնարկատիրոջ
հաշվին՝ աշխատավարձի $\frac{1}{2} - \frac{2}{3}$ -ի չափովնպաստ ստանալու
իրավունքը ^{*)}:

Ցարական ֆինանսների մինիստր Կոկովցեվը, վորի
նախագահությամբ 1905 թ. մարտի 1-ին կազմվել եր
«արդյունաբերական ձեռնարկներում աշխատող բանվոր-
ների կենցաղը բարելավելու միջոցները քննող» մի հանձ-
նաժողով, փորձում ե հերքել այն պնդումը՝ թե կառա-
վարությունը բանվորական հարցով զբաղվում ե գործա-
դունների ճնշման տակ. սակայն, միաժամանակ խոստո-
վանվում ե, վոր «բանվորական շրջաններում ծավալվող
գործադուլային շարժումն ու խորվությունները պատճառ
յեղան, վորպեսզի կառավարությունը ձեռնարկե գործա-

^{*)} Պրոկոպովիչ Ա.—«Ընդհատված հառ», 1912 թ. եջ 1:

բանային որենքների շուտափությ կարդավորման ու բարելավման գործը*):

Բնորոշ են նաև այն, վոր այսպես կոչված բանվորական որենսդրությունը (բանվորական որ, գործարանային տեսչություն, սոցիալական ապահովագրություն, և այլն) սկզբներում տարածվում են միայն բանվորական դասակարգի ավանդարդի վրա, այսինքն պրոլետարիատի այն ժամանակ, վորն ավելի կազմակերպված են և դասակարգային պայքարին ավելի գործոն մասնակցություն են ցույց տալիս:

Բուրժվական հասարակությանը դեպի բանվորների ապահովագրության գործը թեքող խթանը, դրդիչ ուժը բանվորական դասակարգի պայքարն են հանուն սոցիալական ապահովագրության, նրանց ձգտումն՝ ապահովելու իրենց և ընտանիքի անդամների գոյությունը աշխատավարձից զրկվելու, կամ առհասարակ, աշխատանքի վորևեաղբյուր չունենալու դեպքում։ Բուրժվական յերկրների սոցիալ-ապահովագրական որենսդրությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մեկը բանվորական դասակարգային պայքարի հաջողություններից։ Պրոլետարիատը իր պայքարով, իր գործադրույներով և ապստամբության սպառնալիքներով ե, վոր բուրժվագիայից ապահովագրական որենքներ ե կորզում։ Բուրժվագիայի տեսակետով սոցիալ-ապահովագրական որենսդրությունը մի զիջում ե, վոր անում ե ինքը բանվոր դասակարգին։ իսկ ամենքին հայտնի յե, թե նա յերբ ե զիջման ճանապարհը ըսնում—այն ժամանակ, յերբ լուրջ ընդհարումների վախը տկընհայտ ե դառնում, յերբ բուրժվական կարգերի պահպանությունը վտանգվում ե, թեկուզ հենց ժամանակավորապես։

Հաշտվելով ապահովագրական որենքներ հրատարա-

*) «Ապահովագրական որենքների խորամանկ ընույթը»—Ա. Ի. Գրեգորյան, 1913 թ. եջ 7—8։

կելու անհրաժեշտության հետ, բուրժվագիսն ձգառում եւ, հնարավորության սահմաններում, դանդաղեցնել նրանց կիրառումը կյանքում։ Առահովազրական որինագծերը անվերջ ձգձգվուժ են, անվերջ վերաքննվում, մինիստրությունից մինիստրություն անցնում, պարլամենտական այս հանձնաժողովից այն հանձնաժողովի ձեռքն ընկնում։ 1880 թ. Բիսմորկը ուղիստագ եւ մացնում ապահովագրական առաջին որինագիծը և միայն յերեք տարի հետո, 1883 թ. հրատարակվուժ եւ հիվանդության գեպքում բանվորներին ապահովագրելու որենքը։ Ռուսաստանում ապահովագրական առաջին որինագծերը յերեսն են դալիս 1904 թվին, այն ինչ ապահովագրական որենքը հրատարակվում է միայն 1912 թ.։ Թրանսիայում պարլամենտական հանձնաժողովը 1891—1895 թ. ընթացքում գորամայների ապահովագրության 15 որինագիծ է մշակում, սակայն դրանցից և վոչ մեկը պահպակ չի հաստատում*):

Ըստունված ապահովագրական որենքները բանվորին զատ քիչ բան են տալիս, սակայն, հենց բուրժվական իշխանությունների գիտությամբ, գործատերերն աշխատում են այդ քիչ բանից ել զրկել բանվորին, կամ ամենալավ դեպքում, որենքն այնպես բացատրել ու գործադրել, վոր նրան տրվելիքը դառնար մի աննշան, չնչին բան։ Ռուսաստանում հրատարակված 1866 թ. ոգոստոս 26-ի որենքը, վորով գործատերերը պարտավորվում եյին իրենց բանվորներին բժշկական ոգնություն ցույց տալ, գործադրության ընթացքում այդպիսի վիճակի յե արժանանում գործատերերի կողմից հանդիպելով սարոտաժի և բացարձակ որինագանցության։ 1907 թ. պաշտոնական տվյալները պարզում են, վոր 100 գործատիրոջից միայն 7 հոգի իրենց բանվորներին գործարանային հիվանդանոցնե-

*.) Միլ. Ռլյոնով—նույն գիրքը, եջ 20 ծանօթությունը.

բում լիակատար բժշկական ոգնություն են ցույց տվել,
26 հոգի բանվորներին բուժել են ամբուլատորիաներում
և բուժակայաններում, 3 հոգի բուժել են հենց մինիս-
տրական արտահայտությամբ «միանգամայն անբավարար
կերպով», մնացած 64 հոգին բանվորներինև վոչ մի բժշ-
կական ոգնություն չեն հասցըել*):

Ընդունված ապահովագրական որենքներն ինչքան ել
վոր քիչ բան են տալիս բանվորներին, ելի գործատերերը
ջանք եյին թափում այնպես բացատրել ու գործադրել,
վոր նրանց ստանալիքը նվազի, աննշան բան դառնա։ Կազ-
մակերպված ուժերով (իրենց դասակարգային կազմակեր-
պությունների ոժանդակությամբ) նրանք աշխատում են
սեղմել, սահմանափակել բանվորի ապահովագրական իրա-
վունքները։ Պետրոզրադի գործարանատերերի միությունն
Ապահովագրական Խորհրդի բժշկական ոգնության վերա-
բերող կանոնների (1913 թ. հունիս 15) առթիվ իր ան-
դամներին մի գաղտնի շրջաբերական ե ուղաղկում, մատ-
նանշելով թե գանձարկղին անդամակցող հիվանդ բանվո-
րը, վորը հիվանդության հետևանքով անաշխատունակ չի
դառնա, պետք ե բժշկական ոգնություն ստանա, «քանի
դեռ գործից չի հեռացված»։ ուզում ե ասել, թե յերկա-
րատե հիվանդությունից տառապող բանվորին բժշկական
ոգնություն ցույց տալուց ազատվելու ամենալավ միջոցը
նրան գործից հեռացնելն ե։

IV

Պատժիչ որենքների հրատարակման և նրանց գործա-
դրման ճանապարհով պայքար մղել փոխադարձ ոգնու-
թյան բանվորական կազմակերպությունների ղեմ, խո-
րամանկությամբ ոգտագործել նույն այդ կազմակերպու-
թյունները հետին նպատակներով, ձգձգել ապահովագրա-
կան որենքների կիրառումը և սարոտաժի յենթարկել

*)Բ. Գ. Դանսկիյ—նույն գիրքը, եջ 20.

նըանց—այս ամենը բուրժվական կառավարությունների սոցիալական ապահովագրության նկատմամբ ունեցած վերաբերմունքի բնորոշ կողմերն են: Սակայն, անկախ այդ բոլորից և հակառակ բուրժվական կառավարությունների ձգտմանը՝ կազմալուծելու բանվորական փոխադարձ ոգության գործը, կասեցնելու սոցիալ-ապահովագրական որենսդրության զարգացումը, այնուամենայնիվ, վերջինս, թեկուղ թերի, բանվորական դասակարգի պահանջներին և կարիքներին դեռ ևս անհամապատասխան ձևով ու չափով, աճում և առաջ ե գնում հենց բուրժվական կարգերում:

Այս յերեսույթը կարելի յե բացատրել նըանով միայն, վոր հենց բուրժվական տիրապետության որոք տնտեսակարգի վերափոխման ընթացքը սկսում ե թեքվել դեպի կոլեկտիվիզմ, իսկ վերջինս անխուսափելի յե դարձնում պրոլետարիատի պետական իշխանության գույս կանգնելը:

Կազմակերպման հատուկ պայմանների մեջ դեռևս ծնունդ են առել ու զարգացել տնտեսական այն ձևերը, վորոնք պրոլետարիատին բերին, իշխանության հասցըին: Հին կարգերի մեջ նոր ձևերի ստեղծման ու զարգացման միևնույն ընթացքը մենք տեսնում ենք իրավունքի (ինչպես, նաև, ընդհանրապես գաղափարախոսության) ասպարիզում: Բուրժվական կարգերին հատուկ իրավական յերեսույթներին համընթաց մենք տեսնում ենք այնպիսի իրավական ինստիտուտներ, վորոնք միանգամայն ոտար, հակասական են այդ կարգերում տիրող դասակարգի գաղափարախոսությանը: Հին հասարակության ծոցում ծնունդ են առնում նոր հասարակության տարրերը, կյանքի հին պայմանների խորտակման հետ մենում են նաև հին գաղափարները, իսկ նրանց տեղ գալիս ե նորը, թարմը:


Բուրժվական հասարակության համար շատ բնորոշ մի շարք իրավական ինստիտուտներ (ինչպես որինակ մասնավոր սեփականության իրավունքը, ժառանգական

իրավունքը)՝ նույն հասարակության զարգացման, նրան
պեսի կանոնադատ մզու ուժերի անման հետ համբռնթաց
սկսում են, աստիճանաբար, բնունիւ իրենց մեջ բար-
ժական հասարակության սոցիալական կառուցվածքին և
նրա անհատապաշտական զարգացմանը թյանը միան-
գումայն սոսր տարրեր։

Բարժական կարգերին խորթ իրավունքն ինստիտու-
տերի զարգացման ընթացքը աղացած ամենակարե-
առն փառը ենց սոցիալ-ազատավագրական որենորու-
թյանը է։

Յերեան զարգված մարդու արդյունք բանվոր դաստիար-
քի՝ հանուն ապահովման մզան պայքարի, բարժակազիայի
համար խորթ ու սոսր սոցիալ-ազատավագրական որենո-
րությանը ավելի ու ավելի առաջ և զնում, յերբեք եկա-
շմազով կապիտալիստական հասարակության զարգացմանը
ընթացքից։ Յեթե բարժական հասարակության մեջ սո-
ցիալական ապահովագրությանը ծավալված և անընդհան-
ուրավելով նորանոր ապարելներ, յեթե սոցիալ-ազատ-
ավագրական որենորությանը որեցոր բարեկարգում և
կասարելազորձում և, ապա որտ միակ որդիչը, միակ
պատճառը կյանքի նոր, կոմունիստական հիմունքներ կեր-
տող—դաստիարակի—սրբութարիակի զարգացման ու հզո-
րացման փառան և։

ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԳԻՒՅ. ԳՐԱԴ.



FL0002309

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՆԻ ՍՊԵՇԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ**

ԼԱԽԱ ԵՐ ՏԵՍԱԼ՝

**1. Բ. Գ. ԴԱՆՈԿԻՅՈ — Խորերդային սոցիալական ազա-
նավագրությունը**

**2. Ա. Վ. ՎԻՐՈԿՈՒՄՈՎ — Բանվորական ապահովագրա-
կան շարժումը**

**3. Բ. Գ. ԴԱՆՈԿԻՅՈ — Մայ ընտրել ապահովագրական
գոմածարկղի կոմիտեյի անդամ**

**4. Զ. ՏԵՑԵՆՅՈՒՆԻ — Բանվորների ապահովագրա-
թյունը վորովու զատկաբաղային
ուսցեարի արդյունք**

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՅՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**1. ԾՀԽՈՎՈԿԻԻ — Խնչ և տալիս բանվորին սոցիալական
ապահովագրությունը**

**2. Բ. ԼՅՈՒՅԻՄՈՎ — Սոցիալական ապահովագրա-
թյունը անցյալում և այժմ՝**

3. «Ապահովագրվածի տեղեկատու»

||
—————
—

Լույս տեսած հրատարակությունները վաճառվում են
Սոցիալական Ապահովագրության Վարչության գրասենյա-
կում։

ЦЕНА

2440

ԳԻՒՅ Ե' 20 ԿՐՈՒՅՑ